ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև կնքված 2023 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված N ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/10-4 ապրանքի մատակարարման պայմանագիրը՝ ստորև ներկայացնում եմ «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2023 թվականի դեկտեմբերի 15-ին կնքվել է թիվ ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/10-4 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ տնտեսական, սանհիգիենիկ, լվացքի միջոցների և ուղղահայաց շերտավարագույրներ ձեռք բերելու նպատակով: Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետները նախատեսված էին՝ աղբարկղերի համար 06.07.2024թ., իսկ սպունգների համար՝ 08.03.2024թ.:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն) պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող Տեսչական մարմինը 24.12.2024 թվականի թիվ 01/28395-2024 գրությամբ վարչապետի աշխատակազմին հայտնել է, որ Ընկերությունը էականորեն խախտել է ապրանքների մատակարարման ժամկետը: Ընդ որում, Տեսչական մարմինը սույն թվականի դեկտեմբերի 18-ին թիվ 01/27903 գրությամբ «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունից պահանջել է երկօրյա ժամկետում մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները, որին ի պատասխան՝ սույն թվականի դեկտեմբերի 23-ին Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է պայմանագրային պարտավորությունները կատարելուց: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Տեսչական մարմինն առաջարկել է վարչապետի աշխատակազմին նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: ***Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե 15 օրից ավելի խախտվել է ծառայության մատուցման ժամկետը***:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, և հիմք ընդունելով Տեսչական մարմնի կոզմից ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է 2023 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված N ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/10-4 ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջովին լուծված: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջը՝ Պայմանագիրը լուծելու վերաբերյալ հայտարարությունը 26.12.2024թ. հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ***ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման

գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Այսպիսով, Պատվիրատուն արձանագրում է, որ «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ հրաժարվելով Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելուց՝ խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ԱՐՄՎԻԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը, և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ